

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՆԴՐՈՒՇԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(1750-1860-ական թթ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Խառատյան Ա.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Սահակյան Ռ.Օ.

պատմական գիտությունների թեկնածու
Շաքարյան Ա.Կ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է հունիսի 27-ին ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղդասարյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: XVIII դարի կեսերին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունների արդյունքում Կոստանդնուպոլսի հայ համայնքում առաջ եկավ երևելիների մի նոր դաս, որն իրեն որպես պատվանուն վերցրեց «ամիրա» հորջորջումը: Զբաղվելով դրամափոխությամբ, առևտրով և արհեստագործությամբ՝ հայերի այդ խումբն այնքան առաջ գնաց իր զբաղմունքների մեջ, որ ճանաչում ստացավ ոչ միայն հայերի շրջանում, այլ նաև օսմանյան կառավարող վերնախավում: Ամիրա պատվանունը տալիս էին այն հայ երևելիներին, որոնք պետական որևէ պաշտոն ունեին և այնքան հարուստ էին, որ մեծ հեղինակություն էին ձեռք բերում համայնքում, ֆինանսավորում և իրենց կապերով լուծում Կ. Պոլսի հայ համայնքի խնդիրները և այդպիսով, օգտվելով վերոհիշյալ հանգամանքներից, իրենց կամքը թելադրում հայոց պատրիարքներին: Թեմայի լուսաբանումը կօգնի մեր պատմաբաններին և քաղաքագետներին ավելի հստակ ձևակերպումներով խոսել մեզանում այդքան արդիական հայ-թուրքական հարաբերությունների պատմությանը վերաբերող հարցերի շրջանակներում, մեկ անգամ ևս բացահայտել թուրքական պետության արյունարբու, անբարո ընթացքը սեփական քաղաքացիների նկատմամբ:

Թեման արդիական է մի քանի առումներով: Նախ, ամիրայության օրինակով կարելի է երիտասարդ սերնդի մեջ հայրենասիրություն սերմանել, քանի որ ամեն պահի սեփական կյանքը վտանգված լինելով հանդերձ, նրանք կարողանում էին հայրենակիցների համար առանձնաշնորհումներ ձեռք բերել՝ անձամբ իրենց համար ինչ-որ բան խնդրելու փոխարեն: Չմոռանանք, որ նրանք ապրում և աշխատում էին օսմանների համար, որոնց համար հայը մինչև վերջ էլ ռայա մնաց: Թեման արդիական է նաև ժամանակակից սփյուռքի պատմության ուսումնասիրության տեսանկյունից, քանի որ մեր ժամանակներում նույնպես սփյուռքում ապրող մեր հայրենակիցներից ամենահարուստները նաև ավանդույթի ուժով, ուժերին ներածին չափով օգնում են օտարության մեջ ու հայրենիքում ապրող մեր ժողովրդին տնտեսական, մշակութային և քաղաքական հարցերի լուծմանը: Կարևոր նշանակություն ունի նաև այն, որ գտնվելով օսմանյան պետական ծառայության մեջ, ամիրաներից շատերը, մասնավորապես Պայյանները, Տատյանները, Տյուզյանները, Հարություն Պեզճյանը և ուրիշներ իրենց տաղանդն ու ընդունակությունները տրամադրել են օսմանյան պետության ամրապնդմանը: Ոչ թե կայսրությունն է հոգ տարել հայերի նկատմամբ՝ պաշտոններ շնորհելով նրանց երևելիներին, ինչպես ձգտում են բանը ներկայացնել որոշ թուրք ուսումնասիրողներ և այդպիսով հայերին մեղադրել երախտամոռության մեջ, այլ ընդհակառակն, ամիրաներն են իրենց գիտելիքների և ձեռներեցության շնորհիվ նպաստել օսմանյան պետության կենսագործունեությանը: Հայ ամիրայության օրինակը, այդ թվում և նրա

տնտեսական-սեղանավորական գործառույթները վկայում են այն դրական լուրջ դերակատարության մասին, որ հայերն ունեցել են Օսմանյան կայսրությունում:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Թեման ուսումնասիրելով՝ մեր առջև նպատակ ենք դրել սփյուռքահայ, մինչխորհրդային, խորհրդային, թուրք և օտարերկրացի թուրքագետների աշխատությունների, արխիվային փաստաթղթերի և մամուլի նյութերի հիման վրա լուսաբանել.

- ամիրայական խավի ձևավորումը, որը, մեր կարծիքով անհնար կլիներ առանց Օսմանյան կայսրության հողատիրության ձևերի, հարկային համակարգի, արհեստների ու առևտրի մասնակի լուսաբանման
- ամիրայության դերն Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքում և Կ. Պոլսի կառուցապատման մեջ
- ամիրայության փոխհարաբերությունները Ամենայն հայոց կաթողիկոսների, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքների և կաթոլիկ հայերի հետ
- ամիրաների բարեգործական ձեռնարկները
- ամիրայության անկման պատճառները

Մեր առջև խնդիր ենք դրել ցույց տալ, որ ամիրայության շնորհիվ են Օսմանյան կայսրությունում կայացել տնտեսության կարևորագույն ճյուղերը՝ դրամահատությունը և վառողի արտադրությունը, որոշ չափով նաև մեքենագիտությունը: Պալյան ճարտարապետական գերդաստանի շնորհիվ է նաև, որ առայսօր Ստամբուլն Արևելքի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է և զբոսաշրջության կենտրոն: Հայ ամիրաների շնորհիվ է կայացել Օսմանյան կայսրության մանուֆակտուրային արտադրությունը:

Խնդիր ենք ունեցել նաև լուսաբանելու Կ. Պոլսի հայոց պատրիարքների վրա նրանց ազդեցության պատճառներն ու ամիրաների բարեգործական ձեռնարկները:

Խնդիր ենք ունեցել նաև ցույց տալ, որ ամիրայության անկումը տեղի է ունեցել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության տակ:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ուսումնասիրությունը կատարվել է պատմահամեմատական և պատմաքննական մեթոդների օգնությամբ: Դեպքերն ու իրադարձություններն առավել ամբողջական և համակողմանի ներկայացնելու համար համալիր մոտեցում է ցուցաբերվել ատենախոսության մեջ օգտագործված սկզբնաղբյուրների, արխիվային վավերագրերի, պատմագիտական գրականության և մամուլի նյութերի հանդեպ:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ատենախոսության ուսումնասիրության շրջանն ընդգրկում է ավելի քան մեկ հարյուրամյակ՝ XVIII դարի կեսերից մինչև XIX դարի 60-ական թվականները, քանի որ «ամիրա» պատվանունը փաստաթղթերում առաջին անգամ հիշատակվում է 1753 թ.¹, իսկ Ազգային սահմանադրության վավերացումից հետո՝ 1863 թվականին այլևս ամիրայության, որպես վերնախավի մասին խոսելը շատ դժվար է: Ազգային

¹ Մատենադանան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 336, էջ 3:

վարչության մեջ նրանք այլևս ծանրակշիռ դերակատարում չեն ունեցել, իսկ Օսմանյան կայսրության կյանքում էլ նրանք իրենց դերն արդեն սկսել էին զիջել պաշտոնյաների նոր սերնդին և նոր առաջ եկող երիտասարդ բուրժուազիային:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության մեջ արծարծված է ամիրայական խավի ձևավորման հիմնախնդիրը, որն առայսօր մեր պատմաբանների ուշադրության կենտրոնում կարծես թե չի հայտնվել: Փորձ է արվել այս հիմնախնդիրը լուսաբանել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունների համատեքստում, քանի որ կարծում ենք, որ ամիրայության բարձրացումը որոշակիորեն կապ ունի տվյալ ժամանակաշրջանում կայսրությունում հեղինակություն ձեռք բերող տեղական հեղինակությունների՝ այանների բարձրացման հետ: Նորույթ է նաև ամիրայական խավի ձևավորման ստույգ ժամանակը՝ 1750-ական թվականներ, որը հաստատվում է արխիվային վավերագրով²:

Ատենախոսությունում արված եզրակացությունները կարող են օգտագործվել հայ ժողովրդի պատմության հատուկ դասընթացներում և դասագրքերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում, իսկ քննարկվել է հրապարակային պաշտպանության է ներկայացվել նույն բուհի հայոց պատմության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 4 հոդվածներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ): Ամիրայական խավի սկզբնավորման շրջանի պատմության ուսումնասիրությունը դժվարանում է փաստաթղթերի սակավությամբ, իսկ որոշ դեպքերում իսպառ բացակայությամբ: Դրա պատճառն այն հանգամանքն է, որ 1826 թ. օգոստոսի 18-ին այրվեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, և կրակը ճարակեց Աբրահամ Գոլյանի (1813-1815), Պողոս Ադրիանուպոլսեցու (1815-1823) և Կարապետ Պալաթցու (1823-1831) պատրիարքության օրոք տեղի ունեցած իրադարձությունների ու որոշումների մասին փաստաթղթերը: Ավելի շատ փաստաթղթեր են պահպանվել Մ. Մաշտոցի անվան ՀՀ Հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) Կաթողիկոսական դիվանում³, Հայաստանի ազգային արխիվում⁴ և Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան-ինստիտուտի արխիվային ֆոնդերում⁵: Օգտակար են եղել նաև հայ և օտար

² Նույն տեղում:
³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, 11-14, 21, 23, 244, 248:
⁴ Հայաստանի ազգային արխիվ, Կաթողիկոսական դիվան, ֆոնդ 57, գործ 46, Հայկ Պերպերյանի ֆոնդ թիվ 193, Լ. Թուրունջյանի ֆոնդ թիվ 413:
⁵ Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի ֆոնդ, Գ. Բանպուրճյանի ֆոնդ:

ուսումնասիրողների կողմից հրատարակված փաստաթղթերի ժողովածուները⁶ և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում պահվող մեծաքանակ ձեռագրերի հիշատակարանները⁷:

Ամիրայական խավի առաջացումը, նրանց գործունեության մեխանիզմներն անհնար կլինեք լուսաբանել առանց Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությանն անդրադառնալուն: Անհնար է թերագնահատել այդ հարցում խորհրդային արևելագետներ Ա. Միլլերի⁸, Վ. Գորդլևսկու⁹, Ա. Տվերիտինովայի¹⁰, Ա. Նովիչևի¹¹, Ս. Օրեշկովայի¹², Յու. Պետրոսյանի¹³, բուլղարացի հետազոտող Ն. Տոդորովի¹⁴, Ի. Մմիլյանսկայայի¹⁵, Մ. Մելերի¹⁶, կատարած հսկայական աշխատանքը: Այդ հարցում մեծ է նաև խորհրդահայ պատմաբան Մանվել Զուլպյանի¹⁷ վաստակը: Օսմանյան կայսրության պատմության, տնտեսության և քաղաքականության խնդիրների, այդ թվում և XVIII դարի իրողությունների պթափ վերլուծությունն է առկա Վահան Բայբուրդյանի աշխատության¹⁸ մեջ:

⁶ Գիտ քահանայ Աղանեսնց, Դիան հայոց պատմութեան, Թիֆլիս, 1893, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանությունը, ներածությունը, ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի, հ. Ա, Երևան, 1961, Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, /XVI-XVII դդ կանուննամներ, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլպյանի, Երևան, 1964, Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries. English East India Company Resources, Edited by Vahe Baladouni and Margaret Makepeace, Philadelphia, 1998, Armenians in the Ottoman Empire, An Anthology of Transformation 13th – 19th Centuries, Edited, with an introduction and notes, by Vatche Ghazarian, Waltham, Massachusetts, 1997.

⁷ Մայր-ցուցակ հայերեն ձեռագրաց սրբոց Յակոբեանց, աշխատասիրութեամբ Ն. Պողարեանի, հ. 1-11, Երուսաղեմ, 1966-1991:

⁸ Миллер А. Ф., Мустафа-паша Байрактар, Оттоманская империя в начале XIX века, Москва-Ленинград, 1947.

⁹ Гордлевский В. А., Избранные сочинения, т. 3, Силуэты Турции, Москва, 1962.

¹⁰ Аграрный строй Османской империи XV-XVII вв., Документы и материалы, составление, перевод и комментарии А.С. Тверитиновой, Москва, 1963.

¹¹ Новичев А., История Турции, т. 1, т. 2, чч., 1-2, Ленинград, 1963-1968.

¹² Հայրաթյան Մ. Ա., Օրեշկովի Մ. Ն., Պետրոսյան Յու., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1976:

¹³ Петросян Ю. А., Древний город на берегах Босфора, Москва, 1991, Петросян Ю. А., Юсяков А., Город на двух континентах, Москва, 1977.

¹⁴ Тодоров Н., Балканский город XV-XIX веков. Социально-экономическое и демографическое развитие, Москва, 1976.

¹⁵ Смилянская И. М., Социально-экономическая структура стран Ближнего Востока на рубеже нового времени (на материалах Сирии, Ливана и Палестины), Москва, 1979.

¹⁶ Мейер М. С., Османская империя в XVIII веке (Черты структурного кризиса), Москва, 1991.

¹⁷ Զուլպյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, Երևան, 1980:

¹⁸ Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:

Անհնար է պատկերացնել որևէ ուսումնասիրություն առանց մեր պատմագիտության մեծերի՝ Մ. Չամչյանցի¹⁹, Մ. Օրմանյանի²⁰, Ղ. Ինձիճյանի²¹, Ավ. Պերպերյանի²² աշխատությունների, որոնք ունեն աղբյուրագիտական մեծ արժեք, քանի որ այս հեղինակները մեծաքանակ աղբյուրներ օգտագործելուց բացի, դրանց քննական մոտեցում են ցուցաբերում: Ամիրայության բնութագիրն է իր գրքում տվել նաև խորհրդահայ բազմավաստակ պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը²³:

Կ. Պուլսին նվիրված որևէ ուսումնասիրություն թերի կլիներ առանց Հ. Սիրունու²⁴, Ա. Ալպոյաճյանի²⁵ և Ա. Խառատյանի²⁶ մեծարժեք աշխատությունների: Կ. Պուլսի պատմությանն է նվիրված նաև Հրանտ Ասատուրի²⁷ ուսումնասիրությունը: Այս աշխատություններն ընդգրկում են ավելի լայն ժամանակաշրջան, սակայն մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի իրադարձությունները լուսաբանված են շատ մանրամասն, և վերոհիշյալ աշխատությունները շատ օգտակար եղան մեզ, քանի որ բազմաթիվ փաստեր են պարունակում պոլսահայ համայնքի ներսում խմորումների, ծագած խնդիրների, ամիրաների ազգանպաստ ձեռնարկների ու այլնի մասին, հեղինակները գնահատականներ են տալիս վերոհիշյալ իրադարձություններին ու գործիչներին:

Արևմտահայ և սփյուռքահայ պատմագիտության մեջ ամիրայության խնդրով զբաղվել են Հ. Գ. Մրմըրյանը²⁸, Հ. Ե. Պողոսյանը²⁹ և մեր ժամանակներում Հ. Բարսումյանը³⁰: Հ. Գ. Մրմըրյանի աշխատություններից ամիրայությանն է նվիրված առավելապես մեկը, բայց արժեքավոր է նաև նրա վաճառականությանը վերաբերող աշխատությունը: Իր «Մասնական պատմության» մեջ հեղինակը հայ ամիրայության ձևավորման վերաբերյալ իրարամերժ կարծիքներ է հայտնում: Հստակ չէ նաև նրա

¹⁹ Չամչյանց Մ., Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Բ, Գ, Երևան, 1984:

²⁰ Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, Գ, Մայր պառո Ս. Էջմիածին, 2001:

²¹ Ինձիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, Ասիա, հ. Ա, Վենետիկ, 1806, մասն երկրորդ, Երուսաղիմ, հ. Ե, Վենետիկ, 1804.

²² Պերպերյան Ավ., Պատմություն Հայոց սկսած 1772 փրկչական թվականից մինչև 1860 թվականը հանդերձ կարևոր տեղեկություններով և երևելի դեպքերի ժամանակագրությամբ, Ս. Էջմիածին, 2009:

²³ Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955:

²⁴ Սիրունի Յ., Պոլիս եւ իր դերը, հ. 1, 2, Բէյրութ, 1965-69, հ. 3, Անթիլիաս, 1987:

²⁵ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ կենսարիոյ, հ. Բ, Գահիրէ, 1937, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Գ, մաս Ա, Գահիրէ, 1961, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, 1961:

²⁶ Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջայւղ XV-XXVII դարերում, Երևան, 2007:

²⁷ Ասատուր Հ., Պոլսոյ հայերը և իրենց պատրիարքները, Ուոթթթաուն, 1973:

²⁸ Մրմըրեան Յ. Գ., Հին օրեր եւ այդ օրերուն հայ մեծատուններ, Վենետիկ, 1901, Թուրքահայոց իին վաճառականութիւնն ու վաճառականք, 1740-1890, Կ. Պոլիս, 1908, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու, 1400-1900, Կ. Պոլիս, 1909:

²⁹ Պողոսեան Հ. Ե., Գոյումեճեան և Թնկըրեան գերդաստանները, Վիեննա, 1951, Ոսկեան և Մարրլեան գերդաստանները, Վիեննա, 1953, Ալլահիլերտեան գերդաստանը, Վիեննա, 1957, Կէօշեան գերդաստանը, Վիեննա, 1961, Պիլեզիկեճեան գերդաստանը, Հանդես Ամսօրեայ, 1962, մայիս-օգոստոս, Պալեան գերդաստանը, Վիեննա, 1961, Տատեան գերդաստանը, Վիեննա, 1968:

³⁰ Barsumyan H., The Armenian Amira Class of Istanbul, Yerevan, 2007:

«ամիրա» եզրույթի գործածումը, քանի որ հեղինակն ամիրայության ձևավորման շրջանը իրավագիտորեն XVIII դարի 50-ական թվականները համարելով, շարադրանքում այդ պատվանունն օգտագործում է ավելի վաղ ապրած հայ երևելիների համար: Հ. Գ. Մրմրյանի ուսումնասիրություններն այդուհանդերձ շատ արժեքավոր են, քանի որ հեղինակը բարեխղճորեն օգտագործել է ժամանակին հրապարակում եղած հիշատակարանները և ուսումնասիրությունները: Խնդրով զբաղվող հեղինակները նրա աշխատանքը բավականին արժեքավոր են համարում և հաճախ են դիմում նրան:

Շատ արժեքավոր են նաև Հ. Ե. Պողոսյանի մեծաքանակ աշխատությունները ամիրայական գերդաստանների մասին: Հեղինակն ամենայն բժախնդրությամբ է ուսումնասիրել ամիրայական որոշ գերդաստանների պատմությունը, համադրել աղբյուրներում ու գրականության մեջ եղած տեղեկությունները և անհրաժեշտ եզրահանգումներ կատարել: Ինչ վերաբերում է սփյուռքահայ հետազոտող Հակոբ Բարսումյանի աշխատությանը, պետք է նկատենք, որ մեր ժամանակներում նա միակն է, որ կատարել է ամիրայության վերաբերյալ քիչ թե շատ ամբողջական հետազոտություն, ընդգրկել է թե՛ Օսմանյան տնտեսության մեջ ամիրայության դերակատարման հիմնահարցերը, թե՛ հայոց ազգային վարչության մեջ նրանց վարած քաղաքականության խնդիրները: Սակայն սփյուռքահայ հեղինակը հնարավորություն չի ունեցել օգտվելու Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում պահվող արժեքավոր արխիվային նյութերից, որը նրան հնարավորություն չի տվել ճիշտ լուսաբանել որոշ խնդիրներ, և մի շարք հարցերում մենք նրա հետ համաձայնվել չենք կարող:

Աշխատանքը կատարելիս մեզ շատ օգնեցին այն հեղինակների աշխատությունները, որոնք զբաղվել են առանձին անհատների կամ տոհմերի պատմությամբ: Մի քանի աշխատություն կա նվիրված Հարություն ամիրա Պեզճյանին, որտեղ մանրամասն շարադրված են նրա կյանքն ու գործունեությունը³¹, ինչպես նաև սուլթան Մահմուդ Բ-ի հետ նրա հարաբերությունները³²: Ունենք նաև Տյուզյան տոհմի առանձին պատմությունը³³, ինչպես նաև Տատյանների տոհմագրությունը³⁴: Առանձին խումբ են կազմում Ակն քաղաքին, նրա շրջակայքին, եկեղեցիներին ու նշանավոր մարդկանց նվիրված ուսումնասիրությունները³⁵: Այս հեղինակների, մանավանդ Թ. Ազատյանի ուսումնասիրությունները շատ արժեքավոր են, քանի որ հեղինակ Կ. Պուլսի հայոց պատրիարքի քարտուղարը

³¹ Վարքագրություն Հարություն ամիրայի Պեզճյան Խաչեղ անուանելոյ ազգային անգուգական բարևրարի, Թեոդոսիա, 1872, Թիլիսինջևան Լ., Յարություն ամիրայ Պեզճյանն էլ իր ժամանակները (անոթ ծննդեան 200 ամեակին), 1771-1971, Գահիրե, 1971:

³² Հրանտ Գ., Գազազ Արթին ամիրա և սուլթան Մահմուդ Բ, հ. Բ, Պոլիս, 1930:

³³ Մեննիլշեան Յ. Գ., Ազգաբանություն ազնվական գարմին Տիզմանգ, Վիեննա, 1890:

³⁴ Ազատյան Թ., Տատնան գերդաստանը ել իր ականատր դէմքերը, Իսթանպուլ, 1952, Նակիպ Պուրոս Ղալի Ա., Տատնանները (ընտանեկան հուշեր), Գահիրե, 1981:

³⁵ Ազատյան Թ., Ակն եւ ակնցիք, Իսթանպուլ, 1943 թ., Ճանիկեան Տ. Կ., Հնուրիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, Պարսամեան Մ., Քեշեան Ա., Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952:

լինելով, ձեռքի տակ է ունեցել բազմաթիվ վավերագրեր, որոնց մի մասը այժմ գտնվում է Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանում: Մեր աշխատանքում մեծապես օգտվել ենք Վ. Ջարդարյանի հաղորդած կենսագրական տեղեկություններից³⁶: Դրանք վերաբերում են առանձին անհատներին, երբեմն նաև ամբողջ գերդաստանի ներկայացուցիչներին, կամ նրանցից ամենաերևելիներին: Շատ արժեքավոր է նաև արևմտահայ բանասեր և թուրքագետ Պ. Կարապետյանի աշխատությունը³⁷, որում հեղինակը բացի իր ժամանակներում հրապարակում եղած ամբողջ գրականությունից օգտագործել է նաև Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցու մատյանները և վավերագրերը:

Աշխատանքը կատարելիս օգտվել ենք նաև թուրք պատմաբանների աշխատություններից, թեև պետք է նկատենք, որ դրանք հաճախ միակողմանի են ներկայացնում փաստերը և երբեմն էլ գերազնահատում են Օսմանյան կայսրության դերակատարումը Եվրոպայում: Դրանցից են, օրինակ Քեմալ Կարպատի³⁸ և Հալիլ Ինալցիկի³⁹ հրապարակումները: Մի քանի տասնամյակ շարունակ թուրք պատմաբանները, հետևելով պաշտոնապես մշակված չափանիշներին, ստեղծել են Օսմանյան կայսրության պատմության հետ առնչվող Հայոց պատմության մի շարք հիմնախնդիրները, այդ թվում նաև XIX դարի առաջին կեսի պոլսահայ համայնքի կյանքի պատմությունը աղավաղող հայեցակարգեր, ըստ որոնց կայսրությունը հայերի նկատմամբ ցուցաբերել է «հայրախնամ» վերաբերմունք, նույնիսկ սահմանադրություն է տվել հայերին, այն ժամանակ, երբ դեռ ինքը պետությունը այդպիսինը չուներ, առանձնաշնորհումներ է տվել, իսկ երախտամոռ հայերը թշնամական վերաբերմունք ունեին իրենց «օսմանյան հայրենիքի նկատմամբ»⁴⁰:

Թուրք պատմաբաններին երբեմն հետևում են նաև եվրոպացի ու ամերիկացի նորագույն շրջանի հեղինակներ Փ. Քոուլզը⁴¹, Ա. Թոյնբի⁴² և ուրիշներ: Ավելի օբյեկտիվ են փաստերը ներկայացնում Ռ. Ուոլշը⁴³, Չ. Մաքֆարլեյնը⁴⁴, Դ.

³⁶ Ջարդարյան Վ., Յիշատակարան, Հայ նրնոյիննրո կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները, Ելին, Ելին, Յիշատակարան մատենաշար հ. Ա-Դ, Գահիրե, 1910-1935:

³⁷ Կարապետյան Պ., Հնգդարան յիշատակարան Սամաթիոյ Ա. Գևորգ եկեղեցոյ, Ստամբուլ, 1935:

³⁸ The Ottoman State and its Place in World History, Edited by Kemal Karpat, Leiden, 1974.

³⁹ Inalcik H., The Turkish Impact on the Development of Modern Europe, in: The Ottoman State and its Place in World History, Edited by Kemal Karpat, Leiden, 1974.

⁴⁰ Uras E., The Armenians in History and the Armenian Question, London, 1988, Koçuş S. Tarih Boyunca Ermeniler ve Türk-Ermenli İlişkileri, Ankara, 1967, Çavdar T., Türkiye'nin Demokrasi Tarihi 1839-1930, İstanbul, 1995, Kaya Ö., Tanzimat'tan Lozan'a Azınlıklar, İstanbul, 2004.

⁴¹ Coles P., The Ottoman Impact on Europe, London, 1968.

⁴² Toynbee A., The Ottoman Empire's Place in World History, in: The Ottoman State and Its Place in World History.

⁴³ Walsh R., LLD, A Residence at Constantinople During a Period Including the Commencement, Progress and Termination of the Greek and Turkish Revolutions, Vol. II, London, MDCCCXXXVI.

⁴⁴ Macfarlane Ch., Constantinople in 1828, Residence of Sixteen Months in the Turkish Capital and Provinces with an Account of the Present Stay of the Naval and Military Power and the Resources of the

Ուրբվարտը⁴⁵ և Մ. Ուրիչինին⁴⁶, որոնց աշխատությունները սկզբնաղբյուրի նշանակություն ունեն, ինչպես նաև Բ. Լյուիսը⁴⁷, Ն. Բարբերը⁴⁸, լորդ Քինրոսն⁴⁹ ու Է. Ուիթթրոֆթը⁵⁰: Նրանց աշխատությունները ընդգրկում են օսմանյան պատմության մի շարք հիմնահարցեր և շատ օգտակար եղան մեր ուսումնասիրությունը կատարելիս:

Բացի ուսումնասիրողների տարբեր տարիներին մամուլում հրապարակված հոդվածներից, օգտվել ենք նաև ժամանակի մամուլից⁵¹, որի տեղեկությունները ստույգ են և արտահայտում են նաև տվյալ ժամանակաշրջանի խնդիրները, մեր երևելիների նկատմամբ ժողովրդի վերաբերմունքն ու փաստական տվյալներ են հաղորդում ժամանակաշրջանի իրադարձությունների վերաբերյալ:

Շատ օգտակար եղան նաև Օսմանյան կայսրության տնտեսության առանձին ճյուղերին վերաբերող աշխատանքները⁵², ինչպես նաև զանազան ժողովածուներ⁵³ ու հանրագիտարաններ⁵⁴:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, ատենախոսության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքը, ժամանակագրական շրջանակները, գիտական նորություն ու կիրառական նշանակությունը, ինչպես նաև կատարվել է սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն:

Առաջին գլուխը վերնագրված է **«Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական կացությունը XVIII դարում»** և բաղկացած է երկու ենթազվիցից: Առաջին ենթազվիսում (**«Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XVIII դարում»**) համառոտ ներկայացրել ենք կայսրությունում ռազմահողատիրական

Ottoman Empire, London, MDCCCXXIX, Vol.II, Macfarlane Ch., The Armenians: a Tale of Constantinople, Vol. I, London, 1830.

⁴⁵ Urquart D., Turkey and Its Resources: Municipal Organization and Free Trade; The State and Prospects of English Commerce in the East, the New Administration of Greece, Its Revenue and National Possessions, London, 1833.

⁴⁶ Ubicini M. A., Letters on Turkey: An Account of the Religious, Political, Social and Commercial Condition of the Ottoman Empire, part 1-2, London, 1856.

⁴⁷ Lewis B., The Emergence of Modern Turkey, London, Oxford, New York, 1969.

⁴⁸ Barber N., The Sultans, New York, 1973.

⁴⁹ Lord Kinross, The Ottoman Centuries, New York, 1977.

⁵⁰ Wheatcroft A., The Ottomans, Viking, 1993.

⁵¹ Արշալոյս Արարատնան, Զմուռնիա, 1841-1864 թթ, Երոսպա, Վիեննա, 1847-1848, Մասիս, Կ. Պոլիս, 1852, 1853, 1854, 1855, 1857, 1858, Մնդու, Կ. Պոլիս, 1860-1864:

⁵² Pamuk S., A Monetary History of the Ottoman Empire, Cambridge University Press, 2000.

⁵³ Christians and Jews in the Ottoman Empire. The Functioning Role of a Plural Society, edited by Benjamin Braude and Bernard Lewis, New York, London, 1982.

⁵⁴ Gibb H. A. R., J. H. Kramers, E. Levi-Provencal, J. Schacht, The Encyclopaedia of Islam, Vol. I, London, 1960, Agoston G., Masters B., Encyclopaedia of the Ottoman Empire, New York, 2009.

հարաբերությունների քայքայումը, հողատիրության ձևերը, տնտեսության բոլոր ճյուղերի անկումային վիճակը, որը պետության կողմից վարած քաղաքականության հետևանք էր: Անդրադարձել ենք նաև երկրում տեղի ունեցող սոցիալական փոփոխություններին, մասնավորապես տեղական հեղինակությունների՝ այանների բարձրացմանը: Մրանք կամ տոհմիկ ավատատերերն էին, որոնք պիտի հետագայում պաշտոն ստանային (օր.՝ Գարասումանօղլու թուրքմենական այանն Այդընում կամ էլ, ինչպես Արևմտյան Հայաստանում, քուրդ ցեղապետերը): Զգալի ֆինանսական միջոցներ ունենալով՝ նրանք ներդրումներ էին կատարում հողի և այլ անշարժ գույքի մեջ, զբաղվում էին առևտրով և դրամափոխությամբ, ինչպես նաև վերահսկում էին տեղի պաշտոնյաներին հարկերի բաշխման, ծախսման և այլ գործերում: Հետագայում՝ արդեն XVIII դարում, այանները սկսեցին զբաղվել հարկահավաքությամբ և վերածվեցին տեղի բնակչության կեղեքիչների: Իրենց ձեռքում կենտրոնացնելով տեղական իշխանությունները՝ այաններն այնքան բարձրացան, որ նույնիսկ սեփական գորք ունեին:

Կայսրության ողջ էությունը և ոչ մահմեդական բնակչության նկատմամբ նրա քաղաքականությունը ցայտուն կերպով արտացոլվում էր հարկային համակարգում և հարկահավաքության մեջ: Իլթիզամը հարկերի կապալառության համակարգ էր, երբ մի առանձին անձ կամ անձանց մի խումբ նախօրոք պետությանը վճարում էր այն գումարը, որը հավասարագոր էր տվյալ հարկային միավորից ստացված եկամտին՝ հետագայում հարկերը հավաքելուց շահույթ ստանալու ակնկալիքով: Մյուլթեգիմը (կապալառուն) որոշակի գումարով գնում էր հարկահանության մեկ տարվա եկամուտը (մուքաթա՛ա), հավաքում էր հարկերը, փոխանցում գանձարան, իսկ մնացած եկամուտը պահում էր իրեն:

XVIII դարում նախորդ ժամանակահատվածի հետ համեմատած անկումային վիճակում էին նաև արհեստներն ու արդյունաբերությունը: Գերակշռում էին մանր ապրանքաարտադրությունն ու արհեստագործությունը, որոնք ուղղված էին ներքին և արտաքին շուկաների կարիքները բավարարելուն: Միջազգային առևտրում նույնպես կային մեծ խոչընդոտներ: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության արտաքին առևտրում գերակշռում էին եվրոպացի վաճառականները: Նրանք երկրի ներսում ավելի մեծ արտոնություններ ունեին, քան տեղացի առևտրականներն ու արհեստավորները:

Թե՛ հարուստ արհեստավորները, և թե՛ վաճառականները զբաղվում էին վաճառությամբ: Վաճառուները տոկոսով դրամ էին տրամադրում երբեմն նույնիսկ բարձրաստիճան պաշտոնյաներին և արքայական ընտանիքի անդամներին, զբաղվում էին հարկերի կապալառությամբ, դրամափոխությամբ, որը զգալի եկամուտներ էր բերում: Վաճառուները մեծ մասամբ հույները, հրեաներն ու հայերն էին:

Օսմանյան հասարակությունը սոցիալական հստակ դասակարգում չուներ: Սոցիալական ստրատիֆիկացիայի (շերտավորման) տեսակետից Օսմանյան հասարակության շերտերի սահմանները նույնպես հստակ չէին, անցումը մեկ

շերտից մյուսը թեև դժվար, բայց հնարավոր էր ձեռներեցության, շնորհքի, բարեկամական և դրացիական կապերի շնորհիվ: Սակայն վերնախավին պատկանելու արտոնությունը ոչ թե իրավական հարթության, այլ՝ հասարակական գիտակցության մեջ էր: Ազնվականական դաս չկար, և մինչև վերջ էլ չձևավորվեց, իսկ տիտղոսները իրավական հարթության վրա չէին: XVII-XVIII դարերում վերնախավերի ընտրության չափանիշներում արմատական փոփոխություններ են տեղի ունենում, որի շնորհիվ կառավարող իշխանության կողմից որոշված վերնախավին պատկանելու կարգավիճակի փոխարեն դիտարկվում է իրենց տնտեսական հզորության վրա հիմնված ավելի ցածր խավի մարդկանց ինքնահաստատման իրողությունը: Այն արտահայտվում էր գավառական այանների քաղաքական հզորացման, կենտրոնում պաշտոններ ձեռքբերելու, նաև առևտրավաշխատական խավի և ամենաշնորհալի արհեստավորների բարձրացման մեջ:

Շերտավորում էր տեղի ունենում նաև քաղաքային դասի՝ ավելի ստույգ էսնաֆի ներսում: Վերնախավը արհեստանոցի գանձարկղից մի քանի անգամ ավելի փող էր վերցնում, մի քանի անգամ ավելի շատ աշակերտ ու ենթավարպետ էր ունենում:

Կառուցվածքային փոփոխությունները Օսմանյան կայսրությունում պետք է անպայման իրենց ազդեցությունը թողնեին նաև միլեթների վրա: Դրանք մարմնավորվեցին նախ՝ գավառական մեծահարուստների իշխանության գալու, երկրորդ՝ նոր գործարար առևտրական վերնախավի ծնունդի և երրորդ՝ աշխարհիկ մտավորականության բարձրացման մեջ:

Առաջին գլխի երկրորդ ենթազուխը վերնագրված է **«Հայ ամիրայական խավի ձևավորումը և ընդհանուր բնութագիրը»**: Այստեղ փորձ ենք արել ի տարբերություն խնդրին անդրադարձած մյուս հեղինակների, այն դիտարկել օսմանյան իրականության հետ զուգադրաբար: Քաղաքի հեղինակությունները, իհարկե մեծամասամբ մահմեդականներ, բայց հատուկենտ դեպքերում նաև քրիստոնյաներ էին, որոնց չորբաջի էին կոչում, ընդլայնում են իրենց ազդեցության ոլորտը: Հայ իրականության մեջ դա արտացոլվում էր նոր բարձրացող առևտրավաշխատական խավի կողմից պատրիարքարանի գործերը վերահսկելու ցանկության մեջ, որը սկսվել էր դեռևս նախորդ ժամանակաշրջանում:

Ամիրաների բարձրացումն արտացոլում է չելեպիներին ու խոջաներին նրանց դիմակայելու իրողությունը: Առաջ էր գալիս մի նոր խավ, որի մեջ մտնում էին մի կողմից հին համայնական առաջնորդները, որոնց մեջ կային նաև ոչ-մահմեդականներ, իսկ մյուս կողմից շնորհալի անհատականությունները, որոնք դուրս էին գալիս հասարակության բոլոր շերտերից: Բացի դրանից, այաններից ումանք կենտրոնում պաշտոն ստանալով՝ տեղափոխվում էին Կ. Պոլիս և իրենց հետ էին բերում իրենց սարաֆներին, որոնց թվում նույնպես կային բազմաթիվ հայեր: Հաստատվելով և ամրապնդվելով Կ. Պոլսում՝ հայերն օգնում էին գավառից եկած իրենց հայրենակիցներին շատ ու շատ հարցերում: Ինչ վերաբերում է վաճառական ամիրաներին, ապա առևտրային վերնախավը քաղաքներում բարձրացավ այն նույն

տնտեսական ուժի շնորհիվ, ինչ համայնքային առաջնորդները, այն տարբերությամբ, որ եթե առաջինները ներգրավված էին գյուղմթերք տալու մեջ, ապա երկրորդների գործառույթն այդ գյուղմթերքի և արդյունաբերական հումքի վաճառքն էր: Վաճառականները նույնպես զբաղվում էին վաշխառությամբ: Ինչ վերաբերում է ամիրաներին, ապա նրանց թվում հենց այն վաճառականներն էին, որոնք այսպես թե այնպես կապված էին արքունիքի հետ՝ մեծ մասամբ որպես որոշակի ապրանքի մատակարարներ: Ամիրաներին իրենց նախորդած չելեպիներից, խոջաներից ու մահտեսիներից տարբերում էր հենց այն հանգամանքը, որ նրանք արքունիքում պաշտոններ ունեին: Խոսքը միայն տիտղոսի կամ ավելի ճիշտ պատվանվանը չի վերաբերում, այլ նաև ամիրաների պաշտոնապես ճանաչված՝ ավելի ազդեցիկ դիրքին:

Կ. Պոլսի հայ ամիրայության մյուս խումբն անկասկած հայ արհեստավորական վերնախավն է, այն հատ ու կենտ շնորհալիները, որոնք իրենց շնորհքով կարողացել էին հասնել մեծ հաջողությունների և ազդեցիկ դիրք գրավել Կ. Պոլսի հայ համայնքում: Ամիրաների այս խավի բարձրացումը ժամանակագրական առումով համընկնում է էսնաֆներում քյահյանների ազդեցության աճի հետ: Նրանք մեծ հեղինակություն էին վայելում ոչ միայն էսնաֆի ներսում, այլ նաև միլիթում:

Թվում է թե շատ հաճախ մեր պատմագիտության մեջ նույնացնում են «սարաֆ» և «ամիրա» հասկացությունները, չնայած սարաֆների ընդհանուր բնութագիրը, որ բերում է Դ. Ուրքվարտը, վերաբերում է փաշաների սեղանավորներին: Պետք է նկատենք, որ չնայած սարաֆ ամիրաների և փաշաների սարաֆների գործառույթները մալիքյանեի և իլլիթգամի առումով չէին տարբերվում, սակայն ամիրաները նոր խավն էին խորհրդանշում, և նրանք կապված էին օսմանյան կառավարող վերնախավի նոր շերտերի և արքունիքի հետ:

Այս ենթազվխում հիմնավորում ենք նաև այն միտքը, որ չնայած գրականության մեջ երբեմն «ամիրա» պատվանունն օգտագործում են արքունի վաճառապետեր Յաղուպ աղա Հովհաննիսյանի և Սեդրեստրոս Մանվելյանի կամ Երևանենցի հետ, վերոհիշյալ անձինք այդ պատվանունը չեն կրել: Մատենադարանում 1753 թ. մի վավերագիր կա, որտեղ որպես ամիրա հիշատակվում է Պետրոս ամիրա Ալեքսանյանը: Սա առայսօր հայտնի ամիրայի հիշատակումով ամենահին վավերագիրն է, որն էլ գալիս է ապացուցելու այն վարկածը, որ ամիրաների առաջացումը կապված է վերոհիշյալ սոցիալական փոփոխությունների հետ:

Մեր խորին համոզմամբ թե՛ «ամիրա», թե՛ «խոջա» և թե՛ «չելեպի» բառերը պոլսահայության մեջ եղել են զուտ պատվանուններ: Պատվանունը տրվում էր սովորության ուժով և այն ժամանակ, երբ տվյալ անձն իրոք լուրջ ազդեցություն ուներ համայնքի գործերում, որն իր հերթին հնարավոր էր միայն պետական որևէ պաշտոն ունենալու դեպքում:

Մեզ անհավանական է թվում Հ. Գ. Մրմըրյանի այն պնդումը, որը ամիրաները հայ ազնվականության շառավիղներն են:

Մեր կարծիքով ամիրաներն իրենց այդ պատվանունը վերցրեցին, որովհետև զարգացած ավատատիրության դարաշրջանում այդպես էին կոչվում Հայաստանի քաղաքների իշխանավորները՝ «ամիրա քաղաքի»: Եվ քանի որ ամիրաների մեծ մասը, ակնցի լինելով, իրենց Անիից և Վասպուրականից գաղթած էին համարում, և ազնվականական ծագում էին վերագրում, կարելի է ենթադրել, որ այդ պատվանունը տուրք էր հենց այդ երևույթին:

Ամիրաները նաև ապահարկության ֆերման և ձի նստելու իրավունք ունեին: Բայց դրա հետ միասին իրենց հեղհեղուկ վիճակով նրանք ոչ մահմեդականից, և ոչ էլ քրիստոնյայից ու հրեայից չէին տարբերվում:

Աշխատանքի երկրորդ գլուխը կոչվում է **«Ամիրայությունը Օսմանյան կայսրության մեջ»** և նույնպես բաղկացած է 2 ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում (**«Արքունի արհեստասպետերը»**) խոսքը գնում է արհեստավոր ամիրաների մասին, որոնց գործունեությունն ուներ պետական նշանակություն: Կայսրության մանուֆակտուրային արտադրության մեջ նույնպես հայերը զգալի ներդրում ունեն: Օրինակ Մկրտիչ ամիրա Ճեզայիրյանն իր կապիտալի մի մասը ներդրում է մետաքսի արտադրության ոլորտում:

Արքունի վառողպետությունը մի քանի սերունդ շարունակ վարում էր Տատյանների տոհմը: Առաջինը Առաքել Տատ ամիրան էր (1753-1812), որը 1795 թ. նշանակվում է կայսերական 2 վառողարանների պետ Բարութիբաշի:

Հովհաննես պեյ Տատյանը (1798-1859) իր գերդաստանի ամենանշանավոր ներկայացուցիչն է: Նրա գործունեության ընթացքում բազմիցս վկա ենք այն բանի, որ սուլթանը նրան նշանակում էր այս կամ այն գործարանի վերատեսուչ՝ այնտեղ արտադրությունը հունի մեջ գցելու համար, հետո վերադարձնում վառողպետի պաշտոնին: Հովհաննես պեյի շնորհիվ են կայացել Պեյքոզի թղթի գործարանը, Էյուպի մանածագործարանը, Հերեքոյի մետաքսի գործատունը, Ման Ստեֆանոյի երկաթաձուլական գործարանը, Պեյքոզի կաշվի մշակման գործարանը, Նիկոմեդիայի չուխայի գործարանը: Հովհաննես Տատյանի տաղանդի և շնորհքի վկայությունն էր այն հանգամանքը, որ 1846 թ. նա ինքնուրույն, իր որդիների գործակցությամբ գտնում է բամբակից վառող ստանալու գաղտնիքը, որ եվրոպացիները ծածուկ էին պահել թուրքերից: Նա նաև բազմաթիվ հաստոցների հեղինակ է, որ պատրաստել է իր ղեկավարած վառողարանի համար: Որպես պետական պաշտոնյա Հովհաննես պեյ Տատյանը 3 անգամ ուղևորվել է Եվրոպա՝ իր մեքենագիտական գիտելիքները կատարելագործելու և իր ղեկավարած գործարանների համար նոր սարքավորումներ բերելու նպատակով:

Արքունի ոսկերչասպետությունը, ինչպես նաև կայսերական փողերանոցի վերատեսչությունը հանձնված էր Տյուզյանների տոհմին: Նրանք ոսկերչասպետի պաշտոնը վարել են դեռևս սուլթան Ահմեդ Գ-ի ժամանակներից (1703-1730), իսկ 1758 թ. Միքայել չելեպի Տյուզյանը ստանձնում է նաև արքունի փողերանոցի վերատեսչությունը: Այս տոհմի վերջին երկու ներկայացուցիչներին է կայսրությունը

պարտական փողերանոցում բարեկարգումների, մեջիդիե ոսկե դրամների և առաջին թղթադրամների թողարկման և բանկային համակարգի կայացման համար:

Պայանների տոհմը վարում էր ճարտարապետության գերատեսչությունը: Այս տոհմի շնորհիվ է Ստամբուլը վերջնականապես մահմեդական քաղաք դարձել: Միայն Կարապետ ամիրա Պայանը 180 պետական կառույցների հեղինակ էր: Այդ կառույցներից որոշ մասը ճարտարապետ ամիրան կառուցել է որդիների հետ միասին: Դրանցից ամենանշանավորն անշուշտ Դոլմաբահչեն է, որ այսօր էլ զարդարում է Ստամբուլը: Պայանների արվեստը հին արևելյան ոճի և նոր եվրոպականի միաձուլումն էր:

Երկրորդ գլխի երկրորդ ենթազույգը («Սեղանավոր և վաճառական ամիրաները») վերաբերում է վաճառական ու սեղանավոր ամիրաներին: Լինելով պետական պաշտոնյաներ՝ նրանք այդ ոլորտում մեծ մասամբ զբաղված էին արքունական ընտանիքի անդամների և խոշոր պաշտոնյաների պարզևական հողերից՝ խասերից (որոնց թիվն, ի դեպ, Արևմտյան Հայաստանում աննշմար էր) հարկեր հավաքելով: Պաշտոնյաներին վարկավորելուց սեղանավորները նույնիսկ նրանցից փաստաթուղթ էին պահանջում առ այն, որ տվյալ անձը նախկին սեղանավորի հետ պարտք ու պահանջ չունի, այլապես ապագա պաշտոնյան վարկավորում չէր ստանում: Սեղանավորությամբ զբաղվելու համար պետք էր համապատասխան էսնաֆի անդամ լինել և բերաթ (արտոնագիր) ունենալ, իսկ վերջինիս համար որոշակի գումար էր հարկավոր (պետական բարձր պաշտոնյայի սեղանավորության բերաթն արժեք 1500-11000 հազար դուրուշ):

Սեղանավոր ամիրաների մեջ որոշակի թիվ էին կազմում նաև վաճառականները: Արտաքին առևտուրը, որն իրականացվում էր մեծ քանակությամբ քարավանային և տարանցիկ առևտրով զբաղվող վաճառականների (հայերի – Ս. Խ.) կողմից, օսմանյան պետության համար եկամտի կարևոր աղբյուր էր: Ներքին առևտրի ոլորտում հայերն էին տնօրինում ամբողջ Արևմտյան Հայաստանի շուկան: Մետաքսի առևտրով էր զբաղվում Հարություն ամիրա Պեզճյանը: Իսկ փողերանոցի վարիչ դառնալուց հետո նա օսմանյան շուկայից հավաքում էր 20 դուրուշ արժողությամբ ոսկե դրամները և դրանք ուղարկում Հնդկաստան, որտեղ այդ ոսկու համար վճարում էին 25 դուրուշ, քանի որ Հնդկաստանի մահմեդականներն այդ դրամի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունեին:

Երբ խոսում ենք ամիրաների քաղաքական ազդեցության մասին, գերազնահատել այդ երևույթն, անշուշտ, դժվար է, սակայն կար հայ մեկ ամիրա, որի ազդեցությունը Մահմուդ Բ-ի (1808-1839) շրջանում ուղղակի աննախադեպ էր: Եվ դա Հարություն ամիրա Պեզճյանն է: Նա թերևս միակն է ամիրաներից, որի մասին կարող ենք ասել, թե ուներ որոշակի քաղաքական ազդեցություն սուլթան Մահմուդ Բ-ի ժամանակներում: Լինելով սուլթանի մերձավորներից նա շատ անգամ է կայսրությանը օգտակար եղել արտաքին քաղաքական բարդ խնդիրները լուծելու հարցում, իսկ երբեմն էլ այդ նպատակով իր անձնական կապերն ու հեղինակությունն է օգտագործել:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրել ենք **«Ամիրայությունը պոլսահայ համայնքի կյանքում»**: Այն բաժանված է 3 ենթագլուխների:

Առաջին ենթագլուխը կոչվում է **«Ամիրայությունն ազգային վարչության մեջ»**: Միլեթի կյանքում չկար քիչ թե շատ կարևոր մի հարց, որ լուծվեր առանց ամիրաների վճռորոշ խոսքի: Երբեմն էլ դա հանգեցնում էր խավի ներսում լուրջ տարաձայնությունների: Պատահում էր, որ էսնաֆն այլ ցանկություն էր հայտնում որևէ հարցում, սակայն մինչև Ազգային Սահմանադրության ընդունումն ամիրաների խոսքը վճռորոշ էր: Ամիրաներն անմասն չէին նույնիսկ կաթողիկոսական ընտրություններին և ակտիվ մասնակցություն են ունեցել դրանց: Փաստաթղթերն ապացուցում են, որ նրանք կաթողիկոսական թեկնածուների հետ ֆինանսական գործարքների մեջ են եղել ու նաև որոշ չափով ազդել են այս կամ այն թեկնածուին հավանություն տվող օսմանյան կառավարության որոշումների վրա:

Վճռորոշ էր նաև ամիրաների խոսքը Կ. Պոլսի հայոց պատրիարքների ընտրության հարցում: Քանի որ պաշտոնները Օսմանյան կայսրությունում վաճառվում էին, կառավարությանը ձեռնտու էր պատրիարքների հաճախակի փոփոխությունը: Իսկ ցանկացած պատրիարքի մեջքին կանգնած էր մի հայ պաշտոնյա, որն էլ ֆինանսավորում էր նրան, և որը հետագայում պատրիարքից հնազանդություն պիտի ակնկալեր: Հաճախ էր պատահում, որ պատրիարքները հսկայական պարտքեր էին կուտակում, կամ ստանձնած էին լինում այդ պարտքերը նախորդ պատրիարքներից, իհարկե ամիրաների հորդորմամբ, որոնք խոստանում էին սատար կանգնել նրանց: Պարտքերն առաջանում էին տարբեր, բայց առաջին հերթին թուրք պաշտոնյաների կամայականության պատճառով: Բայց հաճախ էլ Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքները դառնում էին ամիրաների ներքին հակամարտության զոհը: Բացի դրանից երևելիները թուրք բարձրաստիճան պաշտոնյաների հետ ավելի մոտ հարաբերությունների մեջ էին, քան պատրիարքները, և միլեթին վերաբերող խնդիրները նրանք ավելի հեշտությամբ էին լուծում:

Ազգային վարչության ղեկն իրենց ձեռքում պահելով ամիրաները նախաձեռնող էին նաև ազգի համար կարևորագույն խնդիրները լուծելիս: Նրանք հովանավորում էին գրահրատարակչությունը, դպրոցներ էին բացում, եկեղեցիներ էին կառուցում կամ վերանորոգում: Սկզբնական շրջանում ամիրաներն իրենց բարեգործական ձեռնարկները, լինի դա դպրոցի հիմնադրում, թե եկեղեցու վերանորոգում կամ կառուցում, կատարում էին մեծ մասամբ մենակ, կամ մի քանի հոգով, մինչդեռ XIX դարի 30-ական թվականներից (Գերագույն Ժողովի հաստատումից հետո) ավելի տարածված է դառնում այս կամ այն հարցի համատեղ լուծումը: Ամիրաների խոշորագույն ձեռնարկներից է Ետի Գուլեի Ս. Փրչի Ազգային հիվանդանոցի կառուցումը: Բարեգործությունը տեղ էր գտնում նաև երևելիների կտակներում: Նրանք նաև հոգ էին տանում իրենց բնակավայրերի եկեղեցիների ու դպրոցների մասին: XVIII դարի կեսերից մինչև XIX դարի կեսերը ընկած ժամանակահատվածում ամիրաների ծախսերով ու հովանավորությամբ մեծ մասամբ Կ. Պոլսում ու նաև

նրանց ծննդավայրերում կառուցվել ու նորոգվել է 50-ից ավել եկեղեցի ու մատուռ և հիմնադրվել է մոտ 30 կրթական հաստատություն:

Երբորդ գլխի երկրորդ ենթազուխը «**Հայ կաթոլիկ ամիրաներ**»-ի մասին է: Կաթոլիկություն ընդունելն օսմանահպատակների համար երկիմաստ կարգավիճակ էր ստեղծում: Մի կողմից կառավարությունը նրանց համարում էր ազգային միլիթների ներկայացուցիչներ, մյուս կողմից նրանք չէին հաճախում իրենց համար նախատեսված եկեղեցիները և չէին մասնակցում լուսավորչականների հետ պատարագին և մյուս արարողություններին: Դեռ ավելին, նրանք կաթոլիկ քահանաներ և նույնիսկ տանը մատուռ կամ աղոթատեղի ունեին: Ազգի մեջ խռովություն և կաթոլիկ ու լուսավորչական հայերի միջև հակասությունների սրման գործում կարևոր դերակատարում ունեին թե՛ Կ. Պոլսի հայոց պատրիարքները, թե՛ կաթոլիկ միսիոներները, թե՛ Բ. Դուռը: Եվ եթե մինչև XVIII դարի վերջը ազգին վերաբերող խնդիրների լուծման ժամանակ տեսնում ենք ազգի երևելիների երկու հատվածների համատեղ որոշումներ, ապա հաջորդող ժամանակաշրջանում պառակտումն արդեն ակնհայտ է, և այն ուղեկցվում է ծանր մեղադրանքներով: Քանի որ կաթոլիկներն իրենց մեջ 4 ուղղություն ունեին, սա ավելի էր պառակտում համայնքը, և ազգի երկու հատվածների միավորումն ավելի էր դժվարանում: Մինչև 1830 թ.Կ. Պոլսի հայ համայնքը ժամանակ առ ժամանակ լալեկոծվում էր կաթոլիկ - լուսավորչական հակամարտության պատճառով: Այդ հակամարտություններից մեկի գոհ ըստ էության գնաց Տյուզյան գերդաստանը, որոնց թշնամիները օգտվեցին իրավիճակից՝ անձնական վրեժ լուծելու համար:

Միավ կլինեք պնդել, որ կաթոլիկ հայերը համայնքին վերաբերող հարցերին չէին մասնակցում: Նրանցից ամենաազդեցիկներին տեսնում ենք և՛ դպրոցներ բացելիս, և՛ գրքերի տպագրություն հովանավորելիս և՛ միլիթին վերաբերող մի շարք խնդիրներում իրենց ազդեցությամբ այս կամ այն հարցին լուծում տալուց: Հակամարտությանը վերջ դրվեց 1830 թ. հունվարի 6-ին հայ կաթոլիկ առանձին համայնքի հաստատումով: Կաթոլիկ ամիրաները վարչությունում զբաղեցրին կարևորագույն պաշտոնները: Առաջին իշխանապետ դարձավ Հակոբ պեյ Տյուզյանը:

Այս գլխի երբորդ ենթազուխում («**Ամիրայության անկումը**») արծարծվում են ամիրայության անկման պատճառները: Խավի անկումը, որ սկիզբ առավ XIX դարի 30-ական թվականներից, ուներ թե՛ օրյեկտիվ թե՛ սուրյեկտիվ պատճառներ: Ավելի լայն, օրյեկտիվ գործոններն են Թուրքիայում նոր՝ կապիտալիստական հարաբերությունների թեկուզ և դանդաղ զարգացումը, միջին խավի զարթոնքը, որ կապված էր 1839 թ. նոյեմբերի 3-ին հրապարակված Թանզիմաթի գաղափարների հետ, նոր բանկային համակարգի ձևավորումն ու եվրոպական գաղափարների տարածումը: Անշուշտ, կային ամիրայական տների շառավիղներ, որոնք պետությանն ու արքունիքին ծառայեցին մինչև XIX դարի վերջը, բայց նրանց մեծ մասը, մանավանդ սարաֆ ամիրաներն աստիճանաբար իրենց գործառույթները զիջեցին եվրոպական բանկերին: Մյուս կողմից էլ Եվրոպայում ուսում ստացած և եվրոպական նոր գաղափարներով տոգորված ամիրաների որդիները պիտի

նույնպես սատարեին կայսրությունում տեղի ունեցող նոր գործընթացներին և պաշտպանեին ավելի ժողովրդավարական գաղափարներ: Ավելի նեղ առումով այս իրողության արտահայտումը հայ արհեստավորական խավի և նրանց ետևում կանգնած մտավորականության ծավալած պայքարն էր պոլսահայության խնդիրները լուծելու իրավունքի համար: Լուսավորյալ երիտասարդության բողոքը պատրիարքարանի և ամիրայության դեմ կայանում էր նաև նրանում, որ վերջիններս, իրենց պահպանողական բնույթից ելնելով, վերահսկում էին ամբողջ մշակութային կյանքը, գրաքննության ենթարկում բոլոր տպագրվող նյութերը: Ամիրայության ազդեցության նվազման մասին է խոսում նաև հանգամանքը, որ պոլսահայերն այլևս առաջվա պես ամեն ձեռնարկում իրենց հույսն ամիրաների վրա չէին դնում, այլ փոքր ընկերություններ հիմնելով հանգանակություններ էին կազմակերպում:

Ազգային Մահմանադրությունն այն իրադարձությունն էր, որ պիտի վերջնականապես խարխլեր ամիրաների դիրքերը պոլսահայ համայնքում: Ազգի երևելիներն ամեն ինչ արեցին այն տապալելու համար, սակայն երկար ձգձգելուց հետո 1863 թ. մարտի 17-ին այն ընդունվեց, և Շ. Սիրունու խոսքերով, «հողի տակ դրեց ամիրաներին և քար գլորեց նրանց գերեզմանի վրա»:

Եզրակացություններ Բաժնում ամփոփված են կատարված աշխատանքի արդյունքները, որոնք կարելի է ձևակերպել հետևյալ կերպ:

Ռազմահողատիրական հարաբերությունների քայքայման արդյունքում Օսմանյան կայսրությունում XVIII դարում ի թիվս այլոց փոփոխություններ են տեղի ունենում նաև վերնախավի ընտրության չափանիշներում, որը ամիրայության կայացման դեպքում, ի տարբերություն այանների, միայն տնտեսական գործոնն էր: Հետզհետե աճող ազդեցությունը պիտի հանգեցներ այն բանին, որ այաններն իրենց հեղինակությունն ավելի բարձրացնելու համար սկսեցին նոր տիտղոսներ վերցնել: Ու քանի որ տիտղոսներն Օսմանյան կայսրությունում սովորության հարթության վրա էին, և նույն գործընթացներն ավելի փոքր չափերով տեղի էին ունենում նաև միլեթներում, այանների հետ բարձրացած ու մայրաքաղաք եկած հայ վաշխատուական խավն իր համար որպես պատվանուն վերցրեց «ամիրա» տիտղոսը, որով միջնադարյան Հայաստանում պատվում էին քաղաքի իշխանավորներին:

Կ. Պոլսի հայ ամիրայական խավը ձևավորվել է 1750-ական թվականներին: Մա մի կողմից կապ ունի այանների բարձրացման, մյուս կողմից մի քանի երևելի ակնցիների՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Հակոբ Նալյանի և արքունի վաճառապետ Յաղուպ աղա Հովհաննիսյանի ազդեցության բարձրացման հետ, որոնք իրենց հայրենակիցների՝ ակնցի սեղանավորների ու արհեստավորների համար բարձրանալու հնարավորություն ստեղծեցին: «Ամիրա» կոչվելու համար անհրաժեշտ գործոններ էին հարստությունը, պետական պաշտոնը և համայնքում ունեցած հեղինակությունը: Այդ պատճառով, չի կարելի խոսել ամիրայական ընտանիքների և գերդաստանների, որպես ընդհանուր երևույթի մասին, քանի որ

արքունի պաշտոնը ժառանգելը դեռ չէր նշանակում ամիրա պատվանվանն արժանանալ:

Չելեպի պատվանունը չի տրվել միայն կաթոլիկ ամիրաներին: Այդպիսի թուր կարծիքը ստեղծվել է ամենաերևելի կաթոլիկ ամիրաների՝ Տյուզանների կողմից չելեպի պատվանունը կրելու պատճառով, որը մեր կարծիքով, ավելի շատ կապված է նրանց զբաղեցրած պաշտոնի՝ փողերանոցի վերատեսչության հետ: Կան բազմաթիվ օրինակներ, երբ էջմիածնական հայերը նույնպես այդ պատվանունն են կրել, և կան կաթոլիկ երևելիներ, որոնք կոչվել են «ամիրա»:

Ամիրաների մի մասը կրթված մարդիկ են եղել, բայց քանի որ տեղեկություններ ունենք նաև միայն սկզբնական կրթություն ունեցող ամիրաների մասին, ամբողջ խավի համար դա իրողություն համարել չենք կարող:

Ամիրաները նաև մահմեդական պաշտոնյային հատուկ որոշ հագուստ են կրել և ձի նստելու իրավունք են ունեցել:

Արհեստապետ ամիրաների՝ Օսմանյան կայսրությանը մատուցած ծառայությունների շնորհիվ, երկրում կայացան մանուֆակտուրային արտադրությունը, կայսրության համար ռազմավարական նշանակություն ունեցող վառողարտադրությունը, ֆինանսական լուրջ բարեփոխումներ անցկացվեցին:

Սեղանավոր ամիրաների դերակատարումը Օսմանյան կայսրության կյանքում գնահատելիս հարկ է նշել, որ մի կողմից սեղանավորները օսմանյան իրականության ծնունդն էին և նրանց գործունեությունը թույլ չէր տալիս զարգացնել գյուղատնտեսությունը: Մյուս կողմից, դրամավիժների գործունեությունը պիտի նպաստեր նոր՝ ավելի արդյունավետ կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացմանը և այս իմաստով սեղանավորները Օսմանյան տնտեսության մեջ որոշ դրական դերակատարում, այնուամենայնիվ, ունեցել են:

Իրենց ձեռքում հզոր նյութական լծակներ ունենալով և օսմանյան բարձրաստիճան պաշտոնեության հետ սերտորեն կապված լինելով՝ ամիրաները իրենց կամակատարներն էին դարձրել Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքներին և ծանրակշիռ խոսք ունեին ազգային-կրոնական կարևոր հարցերի լուծման ժամանակ՝ մինչև XIX դարի 40-ական թվականները:

Շուրջ մեկ դար Կ. Պոլսի համայնքում իշխելու ընթացքում ամիրաներն Օսմանյան դժվարին իրականության պայմաններում անհատապես կամ միասին ձեռնարկում էին եկեղեցիների վերանորոգում կամ կառուցում, դպրոցներ էին բացում, օգնում աղքատ հայրենակիցներին: Ամիրաների հովանավորությամբ բազմաթիվ շնորհալի երիտասարդներ կրթություն էին ստանում Եվրոպայում և տպագրում իրենց աշխատանքները:

Կաթոլիկ և լուսավորչական հայերի միջև հակամարտությունը մեծ վնաս հասցրեց պոլսահայ համայնքին, և եթե մինչև XIX դարի 20-ական թվականներն ազգի այս երկու հատվածների երևելիները գործում էին միասնաբար, ապա հետագայում, հայ և կաթոլիկ հոգևորականների մոլեռանդության և ամիրաների

անհետատեսության պատճառով ազգի երկու հատվածների միջև հակամարտությունն այնքան խորացավ, որ համայնքը պառակտվեց:

1839 թ. ընդունված բարենորոգումների ծրագիրը՝ Թանգիմաթն այն տնտեսական գործոնն էր, որ սկիզբ դրեց ամիրայության անկմանը, քանի որ այդ բարեփոխումների ընթացում սկիզբ դրվեց իլթիզամի վերացմանը: Հաջորդ տնտեսական գործոնը եվրոպական բանկերի օրինակով Թուրքիայում բանկային համակարգի ստեղծումն էր, որը տնտեսական մեծ վնաս հասցրեց դրամափոխ ամիրաներին: Թանգիմաթի հետևանքով արթնացած թուրք ազգայնական բուրժուազիան հետզհետե դուրս մղեց հայերին մաքսերի կապալառության և վառողարտադրության և մանուֆակտուրային արտադրության բնագավառներից:

Թանգիմաթն արթնացրեց նաև արհեստավորական խավին, որն արդեն չէր ցանկանում հնազանդվել ամիրաների մենատիրությանը և վճռական էր համայնքի խնդիրների լուծման ժամանակ ավելի գործուն մասնակցության իրավունք ձեռք բերելու հարցում: Նրանց առաջնորդում էին եվրոպական կրթություն ստացած համայնքի երիտասարդ անդամները: Ամիրայական խավի անկմանը նպաստեց նաև միասնական որոշումներ կայացնելու անկարողությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Խաչատրյան Ս., Հարություն ամիրա Պեզճյանի ազգանպաստ գործունեությունը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական աշխատանքների ժողովածու, հ. II, «Մանկավարժ» Հրատ., Երևան, 2002, էջ 14-17:

2. Խաչատրյան Ս., Պալյան ամիրայական գերդաստանը և Կ. Պոլսի ճարտարապետությունը 18-19-րդ դդ., Ժողովածու պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի (2007 թ. նոյեմբերի 7-9), I պրակ, ՀՊՄՀ, Երևան, 2008, էջ 234-237:

3. Խաչատրյան Ս., Տյուզյանների ամիրայական գերդաստանը 18-19-րդ դարերում, Ժողովածու պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի (2009 թ. նոյեմբերի 19-21), I պրակ, ՀՊՄՀ, Երևան, 2010, էջ 311-313:

4. Խաչատրյան Ս., Կ. Պոլսի հայ ամիրայության ձևավորման հարցի շուրջ, Ժողովածու Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ, տեսություն և պրակտիկա (2012 թ. դեկտեմբերի 14) II Պրակ, Երևան, 2014, էջ 377-381:

ХАЧАТРЯН СУСАННА АНДРУШЕВНА

АРМЯНЕ-АМИРА В КОНСТАНТИНОПОЛЕ (1750-1860 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “ История Армении ”.

Защита состоится 27-ого июня 2014 г. в 14⁰⁰, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной Академии наук Республики Армения (0019, г. Ереван, проспект Маршала Баграмяна, 24/4).

Резюме

В диссертации исследуется история формирования, деятельности и разложения армянской элиты-амира в Константинополе 1750-1860 гг. Работа состоит из введения, 3 глав, заключений и списка использованных первоисточников и литературы. На основе архивных материалов, сборников документов, материалов современной периодической печати и трудов западноармянских, досоветских, советских, постсоветских, иностранных и турецких авторов исследуются главные аспекты вышеизложенных проблем. Научная новизна работы состоит в выявлении причин формирования новой армянской элиты и в уточнении периода ее формирования.

Во введении рассматриваются научная значимость, актуальность, практическое значение исследуемой темы, ее методологическая основа, цели и задачи исследования, дается обзор использованных первоисточников и литературы.

В первой главе исследуется вопрос формирования амира. Диссертантом обосновывается теория, согласно которой появление элиты отражает процессы, происходящие в Османской империи и связанные с возрастанием авторитета аянов и расслоением верхушки ремесленных эснафов. Показано, что в процессе формирования новых социальных слоев в Османской империи середины XVIII века, идентичные процессы происходили в миллетах, в результате возникали новые прослойки общества, экономической основой которых были существовавшие до этого торговоростовщические отношения, с той лишь разницей, что в миллетах эти изменения не имели политической основы. Вследствие этих процессов возникли новые социальные прослойки, присвоившие себе новые титулы, обоснованные традиционным, а не юридическим правом. Амира, оказавшись в столице вместе с аянами, которым они

предоставляли денежные ссуды, заняли посты в османском правительстве и помогли своим соотечественникам обустроиться в столице. Ремесленники же стали элитной прослойкой благодаря расслоению ремесленного эснафа, и многие из них возглавили правительственные ведомства.

Вторая глава посвящена исследованию вопроса о роли амира в экономической и политической жизни Османской империи, а также их вклада в архитектурное убранство османской столицы. Представители рода Татянов были ответственны за производство пороха и необходимой для армии амуниции. Тюзяны были главными ювелирами султанов и возглавляли монетный двор, а Паляны являлись главными архитекторами османской столицы. Благодаря армянским амирам в Османской империи состоялось мануфактурное производство, производство пороха, с точки зрения архитектуры Истамбул стал абсолютно мусульманским городом. Некоторые армяне, будучи приближенными султанов, помогали им в решении довольно запутанных внешнеполитических проблем.

Третья глава посвящена исследованию роли амира в жизни армянской колонии, степени их влияния на патриархов и социально-культурную жизнь армянского миллета. Благодаря политическим связям с османской элитой, амиры имели большее влияние в миллете, чем патриархи, которые были от них в финансовой зависимости. Часть главы посвящена армянской католической элите, взаимоотношениям армян традиционного и католического вероисповедания. Амиры финансировали построение и реконструкцию новых церквей, открытие новых школ и книгопечатание. В этой главе выявляются также внешние и внутренние причины разложения элиты. Внешними, объективными причинами разложения элиты явились процессы вызванные реформами Танзимата, а внутренние причины заключались в зарождении новой буржуазной прослойки и их стремлении отныне контролировать материальные ресурсы колонии.

В заключении представлены основные выводы исследования.

KHACHATRYAN SUSANNA

THE ARMENIAN AMIRAS OF CONSTANTINOPLE (1750-1860-s)

Dissertation for the Degree of a Doctor of History on the specialization of “History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on June 27, 2014, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

The history of origin, activities and fall of the Armenian elite of Constantinople in the 1750-1860-s is discussed in the thesis. The work consists of Introduction, 3 Chapters, Conclusions and List of the Used Sources and Literature. The study of the main aspects of the above mentioned problems has been carried out basing on archive materials, document collections, periodicals of the time, eastern Armenian, pre-Soviet, Soviet, post-Soviet, foreign and Turkish authors' works.

The scientific novelty of the study is the exposure of the reasons of the new Armenian elite formation and more exact time of its forming (the 50-s of the XVIII century).

The scientific significance, actuality, practical importance of the subject, methodology, aims and goals of the thesis are considered and the bibliography is observed in the Introduction.

The problem of the origin of the amiras is considered in the First Chapter. The origin of the elite reflects the processes, taking place in the Ottoman Empire and is connected with the increasing of the ayans' authority and stratification of the crafts esnaf elite. The same social process which took place in the middle of the XVIII century in the Ottoman Empire led to uprising of the new Armenian elite and it was based on the same former trade and usurious relations. The only difference between these processes in the millet had only economical basis. Due to these processes new stratum emerged, which took new titles and that process was only based on traditional law. Moving to the centre with the ayans, they lent money to them, got new posts at the Porte and helped their fellow countrymen to settle down in the capital. As to the craftsmen, they rose due to the stratification in esnafs. The most talented of them ran whole departments.

The role of amiras in economical cultural and political life of the Ottoman Empire, as well as their contribution to the architecture of Istanbul is considered in the Second Chapter. The Tatyans were responsible for producing gunpowder, and other goods for military service. The Tyuzyans were chief-jewellers of the sultans and ran the monetary office. The Palyans were the chief architects of the Empire. Thanks to amiras the Ottoman manufactory was established, gunpowder producing was arranged, Istanbul became a fully Moslem city in the architectural aspect. Some of amiras, being very close with the sultans helped them to solve most complicated foreign policy problems.

The Third Chapter discusses the role of amiras in the life of the Armenian colony, their influence on the Armenian Patriarchs and social-cultural life of the Armenian millet. Amiras had a greater influence in the millet than the patriarchs, which were financially dependent on them. A part of the chapter is dedicated to the Armenian catholic elite and to the relations between amiras of Armenian traditional and catholic confessions.

The amiras sponsored construction and reconstruction of Armenian churches, foundation of new schools and book printing. The outer and inner reasons of the elite falling are also considered in this chapter. It is shown that the outer objective reasons of the elite falling are the processes of Tanzimat reforms, and the inner reasons are wakening of the new bourgeois stratum and their wish to control the financial resources of the colony.

The main results of the thesis are summarized in the Conclusions.